ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՌՈՒԲԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԱՍՅԱՆԻ
(1882—1955)

Երուսաղեմից ստացված հեռագիրը գուժեց Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբան Ռուբեն արքեպիսկոպոս Մանասյանի հանկարծահաս մահը, որը տեղի է ունեցել սույն թվի հուլիսի 10-ի առավոտյան։ Ռուբեն արքեպիսկոպոսի մահով Հայ Եկեղեցին կորցնում է իր բարձրաստիճան, հայրենասեր և բազմափորձ հոգևորականին։

Հոգելույս սրբազանը ծնվել է 1882 թվին Երևանում։ Սովորել է Երևանի թեմական դպրոցում և ավարտելով նրա լրիվ դասընթացը, որոշ ժամանակ ուսուցչությամբ զբաղվելուց հետո, նա միանգամայն ընդմիշտ ընտրում է հոգևոր կյանքի ասպարեզը։

Հանգուցյալը 1911 թվին Ս. Էջմիածնում ձեռնադրվում է կուսակրոն վարդապետ և մտնում Մայր Աթոռի միաբանության շարքերը։

Եկեղեցական գործունեության իր առաջին շրջանում մենք հանգուցյալին տեսնում ենք Գևորգյան Ճեմարանում երաժշտության դասատուի պաշտոնում, իսկ Կոմիտաս վարդապետի Էջմիածնից մեկնելուց հետո, նրան է հանձնվում Մայր Տաճարի երգեցիկ խմբի ղեկավարությունը։

Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի օրով, 1922—1923 թվականներին, հանգուցյալ սրբազանը նշանակվում է Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ, ուր ձեռնհասորեն վարում է թեմական գործերը։ Այնուհետև նա նշանակվում է Հեռավոր Արևելքում (Մանջուրիա, (Խարբին-Մուկդեն) հոգևոր հովիվ։ Երջանկահիշատակ Գևորգ Ե. Կաթողիկոսը, հաշվի առնելով նրա փորձառությունը և եկեղեցական օգտաշատ գործունեությունը, 1928 թվին ձեռնադրում է նրան եպիսկոպոս և նշանակում Իրաքի թեմի առաջնորդ։ Հոգելույս սրբազանը այստեղ երկար տարիներ կոլոովով և սրտեռանդ նվիրումով վարում է իր առաջնորդական պարտականությունները։ Եկեղեցանվեր այդ գործունեության համար նա Խորեն Ա. Կաթողիկոսի կողմից արժանանում է արքության բարձր պատվին և աստիճանին։

Հանգուցյալ սրբազանը մինչև իր կյանքի վերջը մնաց հայրենասեր և էջմիածնասեր եկեղեցական. նա երբե՛ք չդավաճանեց իր ուխտին և հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնին։

Ռուբեն սրբազանը իր կյանքի վերջին տարիներին, խոր ծերության հասակում, թողել էր առաջնորդական պարտականությունները, քաշվել Երուսաղեմի հայոց վանքը և, Ս. Հակոբյանց միաբանության շարքերում, հյուրընկալության վայրում, անց էր կացնում իր կյանքի վերջին տարիները։ Այնտեղ էլ կնքեց իր մահկանացուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։